

ԾՈՅԼԻ ԿԻՐՃԸ *

Մինչև մեր պառկած մասս, ծոյլ դու:
Առաջ. 6, 8: **

Եւ անունը տալիս են ուղեցոյցն ըր Սաղեւնում մի լեռնային անցքի: — Մի վերջին թիւ կտոր ևս դէպի վեր՝ և դուք վերեւում կրկնիք, բայց գուք այդ նեղութիւնը քաշել չէք կամենում: առանց այն էլ բաւական մեծ ջանք էք գործ գրել այդ տեղին հասնելու համար: Եւ ինչո՞ւ բոլորովին վերը բարձրանանք, տեսարանը այս տեղ արդէն հիանալի է. կործ խօսք, կր մնանք: — Վաստակած հայեացքով չափում է ծոյլն իւր կանգնած տեղի և գագաթի մէջ տեղ ընկնող տարածութիւնը, ձեռնափայտը վայր է ձգում, վայր է դնում պալատակր, մեկնում է փառաւորապէս կաշաշ խոտի վերայ և ասում է, որ այլ ևս ոչ մի քայլ առաջ չի գնայ: Եւ այսպէս կրկնում է նա իւրաքանչիւր ամառ: — Սրամիտ մարդիկ են ուղեցոյցները՝ լաւ անուն են գտել:

Սակայն ով որ կարծում է, թէ ծոյլի կիրճը միայն Չուիցերիայի լեռներում է գրունում սաստիկ սխալութիւն է: Լեռների մեծ մասի կէս բարձրութեան վերայ, սովորաբար հէնց վերջին թիւ կտորից առաջ, այդպիսի մի տեղ կայ: Այդպիսի մի տեղ գտնուում է նաև այն բոլոր ճանապարհների վերայ, ուր բարոյական ջանք է պահանջում: Ով որ արիւրաբար առաջ է գնում՝ նպատակին հասնում է. բայց թուլամորթը չափում է հեռաւորութիւնը, կորցնում է փոտահութիւնը իւր ուժերի վերայ և մնում է պառկած. իսկ մինչև այստեղ գործ գրած աշխատութեան արդիւնքը լինում է՝ ամօթ և նախաախնք: Այն երանի ամէն որ ծոյլի կիրճի մօտ սկզբնական եռանդն ունենար:

Չանազան տեսակ ծուլութիւն կայ: Ծոյլ են ասում այն աշակերտին, որ փոխանակ գասր սովորելու խօսում է ու զուարճանում: Բարի, բայց միթէ այն միտն էլ, որ այդպէս ջանասիրութեամբ իւր գործի հետ է, այդպիսի կանոնաւոր տառեր է գծում: չէ կարող նմանապէս ծոյլ լինել: Եւ է նա, երբ ուղեղը ամենեւին չէ աշխատում: երբ նա իւր պարտքը կատարում է առանց միտքը լարել:

Եւ, որպէս զի սովորածը իրօր բմբռնէ և սեփականէ:

Մտքի ծուլութիւնից աւելի սոոր բան չը կայ: Հաստերը վերցնում են ուրիշ մարդոց պատրաստի կարծիքները և ապրում են որիմէն շրջապատողների հաշուով: Եթէ նախապաշարութիւններ մշտնջենական տեսողութիւն ունին, այդ նորանից է, որ ոչ ոք նեղութիւն չէ կրել նոցա հիմքը քննելու: Մերթ հին մտլորութիւններն են պինդ բռնում մարդիկ, մերթ սգեւորում են նորերի համար: Մեծամասնութիւնը, երբեմն նաև խելքի ու տաղանգի աէր մարդիկ, չեն մտածում, աղ կրկնում են միայն ուրիշի առաջները: Կան հաստաւորողներ, հաաստացող կարծոաւծներ, որոնք միայն ծուլութիւնից են այնպէս կան անհաւատներ էլ, որոնք իրենց ազատամիտ են անուանում: բայց չըգիտեն մինչև իսկ թէ մտածելն ի՞նչ ասել է:

Հատ պատուական մարդիկ լուստեա են, տիրապետող անարգարութիւնը չեն տեսնում, միայն նորա համար, որ ծոյլ են: Կորանով միայն կարելի է բացատրել թէ ինչո՞ւ մարդիկ, որոնք ամենեւին վատ ու փչացած չեն, ամէն մի բարի զգացման համար սիրտ ունին՝ այնուամենայնիւ անդադար, իրենց լռելեայն տուած յօժարութեամբ, մեղսակից են գտնուում այնպիսի անտեղութիւնների և անխղճութիւնների, որոնցից իրենք ոարսափով ետ կը քաշուէին: որովհետեւ կայ միանգամ այդ ամէնը և միշտ եղել է՝ նոցա մէջ տեղից վերցնելու կարեւորութիւնը ոչ ոքի աչքին չի երևում:

Մեզ մի դարթեցնող է պէտք: Ծոյլ են այն ամէնքը, որոնք քնում են, երբ արթուն և ոտքի վերայ լինել պէտք է: Մեր քուն կամ կէս քուն լինելուցն է, որ այս վիճակի մէջն ենք և թոյլ ենք տալիս աշխարհին իր բռնած ճանապարհով գնալու: Եթէ մենք արթուն լինէինք՝ ինչպէս պէտք է, ինքներս մեզ չէինք հաւանի, մի քանի բաւախադութիւններ, կեղծ, բռնի կերպով տաքացրած բարեպաշտութիւնը, մեզ բաւականութիւն չէին տայ, մեր սովորական անհոգութիւնը վերջ կունենար: Մենք աչքներս բաց կը պահէինք և մեր կամ ուրիշների տեսողութիւնը պրդատրեցնող սովեստութիւնների առաջը կառնէինք, նաև այն անարգարութեան, որ այդ սովեստութիւնների վերայ է հիմնուած:

Մտքի ծուլութիւնը խորաակեղաց յետոյ կամքի ծուլութեան հետ է սկսում կրաւել: Առաջ գնացէք և մի խաբուիք, Բարի գործն ինքն ըստ ինքեան ծանր է, բայց ա-

* Թարգմանում Die Christliche Welt Թերթի 1: 26-եր, հոգնակա 1, Մոսկո:

** Հայերէնն է. Մինչև յեր յորսայտեալ կաս, ով վատ:

րի և անձնուրաց ջանքը դէպի բարին՝ արգէն մի իրական բարիք է։ Ով որ ոչինչ չէ փորձում փտանգի չէ ենթարկուում՝ կարող է հեշտութեամբ կատարեալ տպիկարութեան դատապարտել ինքզինքր։

Մի պատուական մարդու աշխատում էին միանգամ ետ կանգնեցնել մի ազնիւ գործից՝ առարկելով թէ չի յաջողուիլ ։ Եւ պատասխանեց նաւ եթէ փորձեմ՝ կարենի է չաջողուիլ ։ Բայց եթէ չք փորձեմ՝ անշուշտ չի յաջողուիլ։ Ապա ուրեմն փորձենք և ծոյլ չը լինինք։ Կրգայ գիշերը, երբ ոչ ոք գործել չէ կորով, օգուտ քաղենք ցերեկից։



ԱՆԵՏԱՐԱՆԿԱՆ — ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՐ՝

Ի՞նչ են նշանակում աւետարանական—Համայնական կամ աւելի ընդարձակ մտքով՝ քրիստոնեայ—Համայնական բառերը։ այդ հարցին վերջին համաժողովում որ տեղի է ունեցել ներկայ թուականի (մայիս 25) յունիս 6-ին Էրֆուրտ քաղաքում այսպէս է պատասխանել հակիթ խօսքերով իւր խօսած ճառի մէջ համաժողովի երկրորդ նախագահ, Ալիկ Տելմ Ա. կայսեր պալատական քահանայ անուանի Հոֆօկկերը։ * «Աւետարանի կենսատու ոյժերի համար համայնական աշխարհի մէջ ճանապարհ հարթելու գաղափարն է սաւ համայնական զարգացումը առանց աւետարանի դէպի անկումն է տանում։ Կարողութեան տէր անձինք յաճախակի մոռացութեան են պուել։ որ որոշ պատասխանատուութիւն ունին իրենց ունեցած հարստութեան համար։ եկեղեցին ևս մոռացել է յաճախ նոյնը։ բոլոր ուշադրութիւնը գաւառական ուսմանց վերայ դարձնելով՝ նա անուշադիր է թողել կեանքը, և ահա կեանքը ապրտամբել է նորա դէմ։ Մենք կամենում ենք կեանքը յետ նուաճել մեր թագաւոր Քրիստոսի համար որ և թագաւոր է համայնական աշխարհում։ Բանուոր դասակարգն ևս մի ներքին տենչ ունի դէպի գաղափարականը, նա կամ կրկին քրիստոնեայ կղաղայ, կամ դէպի կործանումն կղիմէ։ Պարզ է, որ մեր այս նոր ճանապարհի վերայ մոլորութիւններ նոյնպէս տեղի կունենան։ Քրիստոնէական նոյն չէ, ինչ որ համայնական (Sozial)։ Աշխարհի փրկագործութիւնն է քրիստոնէութիւնը, Բայց նա միաժամանակ և համայնական է։ Առանց այդ համայնական տարրի քրիստոնէութիւնը չէ կարող աշխարհը նուաճել, համայնական նմանապէս նոյն չէ ինչ որ քրիստոնէական։ Դա ևս իւր համար մի առանձին աշխարհ է։ Քրիստոնեայ—համայնական աշխատանքը պէտք է ծառայէ եկեղեցուն։»

Այս համառօտագրութիւնը, որ ընթերցողներին շատերի համար երևի բոլորովին մութ կմնար պարզարանելու և մեր ի նկատի ունեցած երեւոյթի մասին որքան կարող ենք աւելի ընդարձակ գաղափար

տալու համար՝ նախ քան վերջին համաժողովի մասին գերմանական թերթերի տուած տեղեկութիւնները հաղորդելը, երկու համաժողովների անձամբ ներկայ գտնուած և մի քանի տարի է ի վեր խնդրի ընթացքին հետաքրքրութեամբ հետեւած լինելով, կաշխատենք ամփոփել այստեղ մեր ունեցած ծանօթութիւնները և յիշողութիւնները։

Արդէն Արարատի անցեալ համարում Գրկութեան բանակի մասին խօսելիս, աշխատեցինք մի թեթեւ գաղափար տալ ժամանակակից համայնական կազմութեան յառաջ բերած խնդիրների՝ բանուորական հարցի մասին։ Այդ հարցը, ինչպէս յիշուեցաւ, ամենից առաջ Անգլիայումն է դարձնել, այնտեղ ամենից աւելի հատուկացել և ծաւալ ստացել։ Բայց անգլիացի գործնական մարդիկ լինելով, աշխատել են ամէն տեսակ գործնական միջոցներ հրնարել եղած պահանջներին որոշ չափով բաւականութիւն ապուել կամ եթէ կարելի է՝ ճնշելու նոցա, և այդ շատ դէպքում յաջողուել է։ այնպէս որ բանուորական հարցը այսօր Անգլիայում համեմատաբար աւելի անկասկած փնտրի մէջ և Լուրջ կանոնաւոր ընթացք է ստացել։ Դորա փոխարէն նոյն հարցի վերաբերմամբ ամենատաքնապալից փնտր ունի այժմ Գերմանիան։ Գերմանացիք աւելի դանդաղ են առհասարակ և աւելի դժուարութեամբ են մի նոր խնդրի ձեռք առնում։ Բայց ձեռք առնելուց յետոյ նոցա ամեն և խնդրի խորն են գնում բաղմանողմանի կերպով քննում պատճառարանում և որոշ սահմաններ են տալիս։ որով և յառաջ է գալիս մի առանձին տեսութիւն, մի նոր գաղափար, և սկսուած շարժումը հաստատուն կազմակերպութիւն ստանալով՝ ունենում է իրեն յատուկ սկզբունքներ, որոնցով առաջնորդուել կարող է այդ շարժման մասնակցող իւրաքանչիւր մէկը՝ ոչ միայն անձնական շահի կամ հակումների, այլ և լոկ դաղափարի տեսակէտից։ Այսպիսի մի շարժումն է ահա Սոցիալ-դեմոկրատիան, որ բուն գերմանական ծագումն ունի և բանուորական խնդրի չըջանից դուրս գալով, ահաւկանապէս ձեւակերպում և ամրոթի առաջ է գնում հասարակական կեանքի մի նոր պատկեր, որի համաձայն հասարակութեան ամէն մի անդամ միջոց պէտք է ունենայ հաւասար կերպով ձեռք բերելու և վայելելու աշխարհի բարիքները։

Նման մի հաւասարութիւն խոստանում էր տալ ինչպէս յայտնի է, անցեալ դարու վերջերում ֆրանսիական յեղափոխութիւնը։ Այն ժամանակ կային առանձնաշնորհայ, ազնուական դասակարգեր, որ որդւոց յորդի մեծամեծ կալուածներ ժառանգելով և իրաւունքներ վայելելով, առանց սեփական աշխատութեան և արժանիքի՝ հանգիստ և փարթամ կեանք էին վարում։ մինչդեռ հասարակ դասակարգի մարդիկ շնայելով իրենց բոլոր արժանաւորութիւններին և գործ դրած աշխատանքին, բարձր պաշտօնների հասնել, կեանքի վայելչութիւն ձեռք բերել կարող չէին։ Յեղափոխութիւնից յետոյ վերցուեցաւ արդարեւ գէթ օրինապէս դասակարգերի խտրութիւնը, առաջ անցաւ այսպէս կոչուած երրորդ դասակարգը, որ օգուտ քաղելով մասնաւոր մեքենաների աշխարհի մէջ մտած ահապին փոփոխութիւններից (չողու, ելեքտրականութեան գործարարութիւնը) իւր խելքով ու ճարտարութեամբ, վաճառականութեան և գործարանների միջոցով սկսեց տիրապետող դեր կատարել։ Սակայն շատ շուտով նկատելի եղաւ որ